ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈՒՇԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ

Բայի սեռի կարգը, անբաժան լինելով բայի թե՛ դիմավոր, թե՛ անդեմ ձևերից, մեծ կարևորություն ունի նրա խոսքիմասային-քերականական բնույթի և մյուս կողմից խնդրառության ու նախադասության կառուցվածքի մի շարք իրողությունների ըմբռնման, պարզաբանման ու բնութագրման գործում: Ժամանակակից գրական թուրքերենը, ժառանգելով հին թուրքերենի և օսմանյան շրջանում գործածվող բայասեռի բնորոշ ածանցները, ինչպես նաև յուրացնելով ժամանակի ընթացքում ստեղծված նորաբանությունները, այսօր ունի բայասեռի յուրահատուկ ձևեր, որոնք խոսքի շղթայում ունեն ձևաիմաստաբանական և շարահյուսական մի շարք դրսևորումներ: Այդ շղթայում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ժամանակակից թուրքերենի կրավորական սեռը (Edilgen Çati), որը կազմվում է անցողական ու որոշ անանցողական բայահիմքերից՝ կրավորական ածանցների հավելումով: Առհասարակ կրավորական սեռը ցույց է տալիս, որ նախադասության տրամաբանական սուբյեկտը ենթարկվում է ստորոգյալով արտահայտված գործողության ազդեցությանը[1]: Կրավորական բայով կազմված նախադասություններում գործողության՝ ում կամ ինչի կողմից կատարված լինելը հայտնի չէ, այսինքն՝ գործողություն կատարող առարկաները չեն բացահայտվում: Այս նախադասություններում գործողություն կատարողից ավելի շատ կատարված գործողությունն է առաջին պլան մղվում: Կրավորական սեռի կազմավորման ժամանակ ելակետային հիմքի օբյեկտը վերածվում է կրավորական սեռի սուբյեկտի[2]: Կրավորական սեռը, ըստ էության, ձևավորվում է բայի քերականական փոփոխությամբ: Սեռային այս փոփոխությամբ անցողական (ներգործող) բայերով արտահայտվող գործողությունը կամ եղելությունը ներկայացվում է հակադարձ ուղղվածությամբ: Թեև իրականում կրավորական սեռով արտահայտվում է նույն իրողությունը, որը դրսևորվում է ներգործական բայով, սակայն մի

---

[1] **Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լոքմագյոզյան Տ.**, Թուրքերենի դասագիրք, գիրք I, Երևան, 2001, էջ 119: A. Safaryan, A. Soghomonyan, T. Loqmagyozyan, Turqereni dasaqirq, girq I, Erevan, 2001, ej 119.

[2] **Джанашиа Н.** Морфология турецкого глагола, Тбилиси, 1981, с. 66.

տարբերությամբ, որ կրավորականի դեպքում սեռային հատկանիշն արտահայտվում է քերականական վերադարձումով:

Ինչպես նկատում է հայ լեզվաբան Ա. Աբրահամյանը. «Կրելու իրական գաղափարը քանի դեռ չի անցել քերականական առանձնահատուկ վերացական բովով, չի կարող դիտվել կրավորականության հատկանիշ»[3]: Նույնը կարելի է ասել ժամանակակից թուրքերենի կրավորական սեռի մասին: Կրավորական սեռի ընդհանուր բնութագիրը տալու համար կարող ենք նշել, որ այդ սեռը գործողությունը կրելու գաղափարն արտահայտում է՝ ի հակադրություն անցման գաղափարի: Եթե գործողություն կատարողը կամ միտքը հաղորդողը ցանկանում է ընդգծել, որ առարկան իր վրա է կրում մի ուրիշ առարկայի գործողությունը (եղելությունը), բայը դրվում է կրավորական սեռով և երբեմն էլ օգտվում լեզվական քերականական այն միջոցներից, որոնք արտահայտում են կրավորական սեռ:

Ժամանակակից թուրքերենի կրավորական սեռը ձևավորվում է անցողական և մի քանի անանցողական հիմքերին համապատասխան վերջածանցների կցման միջոցով: Թուրք հետազոտողները, կրավորականության ածանցն ընդունելով որպես անանցողականության մասնիկ, կրավորական բայերը բնութագրում են որպես անանցողական բայեր: Մ. Էրգինը նշում է. «Պասիվության և կրավորականության ածանցով կազմվող բոլոր բայերն արտահայտում են եղելություն, այսինքն՝ անանցողական են: Այդ պատճառով պասիվության և կրավորականության ածանցն անվանում են նաև անանցողականության ածանց»[4]:

Եթե ավանդական սահմանմամբ հնդեվրոպական լեզուներում կրավորական սեռը հաղորդում է լեզվով չարտահայտված կամ թեք հոլովով արտահայտված սուբյեկտից բխող գործողություն և ուղղված է ուղղական հոլովով արտահայտված օբյեկտին, ապա թյուրքական լեզուներում այս ձևի բովանդակությունն ավելի լայն է, և նրանցում բայական կառուցվածքների կրավորականությունը պետք է ըմբռնել որպես գործողության սուբյեկտի անորոշություն կամ ոչ ակներևություն: Թուրք լեզվաբան Ք. Օղլուի դիտարկմամբ թուրքերենում տարածված է հետևյալը. «Տրամաբանական ենթական անկախ այն բանից՝ արտահայտվում է մակերեսային կառուցվածքում, թե ոչ, ստորոգյալում

---

[3] **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան 1962, էջ 610: **Abrahamyan A.**, Bajn jamanakakic hayerenum, girq 1, Erevan, 1962, ej 610.

[4] **Ergin M.**, Anaçizigileriyle Evresel Dilbilgisi ve Türkçe, Istanbul: Multiligual Yayınları, 2000, s. 56-57.

առկա դիմային վերջածանցները մեզ հուշում են ենթակայի առկայությունը»[5]: Անցողական-կրավորական սեռի բայերը եղելությունն արտահայտելիս խոնարհվում են միայն 3-րդ դեմքի եզակի թվով, անցողական-կրավորական սեռի բայերը կատարումը փոխարինելիս կարող են խոնարհվել ստորոգման բոլոր վերջածանցներով: Կրավորական բայի անցողական կառուցվածքի դեպքում պարտադիր է, որ նրա շուրջ գտնվի անվերջածանց հայցական հոլովով դրված անվան նշանակությամբ մի միավոր: Անցողական կրավորական սեռի բայի խոնարհման ժամանակ /մեջ/ (վերցվեցի, ուղարկվեցինք, խփվեցինք և այլն) տեղ գտած դիմային վերջածանցը հղում է կատարում ոչ թե գործողությունը կատարողին (ենթակային), այլ գործողությունից ազդված անվերջածանց հայցական հոլովով դրված այդ միավորին (ուղիղ խնդիր): Իսկ սա ցույց է տալիս, որ ստորոգյալի մեջ միշտ չէ, որ թաքնված, առկա է ենթակա, երբեմն նաև ուղիղ խնդիր էլ է հանդիպում[6]:

Ժամանակակից թուրքերենում կրավորական սեռը կազմվում է հետևյալ ածանցներով՝ բաղաձայն հնչյունով (բացառությամբ -l- հնչյունի) վերջացող բայահիմքերին կցվում են կրավորական սեռի (il -il -ul -ül) վերջածանցները: Օրինակ՝ yazmak/գրել – yazilmak/գրվել, seçmek/ընտրել – seçilmek/ընտրվել, vurmak/խփել – vurulmak/խփվել, açmak/բացել – açilmak/բացվել, sevmek/սիրել – sevilmek/սիրվել: Նախադասության մեջ կրավորական սեռն ունի հետևյալ դրսևորումները: Evimiz çok ucuz satildi/Մեր տունը շատ էժան վաճառվեց: Mektuplar gönderildi./Նամակներն ուղարկվեցին: Երկրորդ նեղ ձայնավորով մի շարք երկվանկ բայական հիմքերին կրավորական սեռի ածանցներ միացնելիս երկրորդ ձայնավորն ընկնում է: Օրինակ՝çağirmak/կանչել – çağrilmak/կանչվել, devirmek/շրջել – devrilmek/շրջվել: L – բաղաձայնով վերջացող բայահիմքերից կրավորական սեռը կազմվում է (in -in, -un, -ün) վերջածանցների կցմամբ: Օրինակ՝ bulmak/գտնել – bulunmak/գտնվել, almak/վերցնել – alinmak/վերցվել, bölmek/բաժանել – bölünmek/բաժանվել, bilmek/իմանալ – bilinmek/իմացվել: Kitaplar alinmiştir./ Գրքերը գնվեցին: Kaybolmuş çocuk bulundu /Կորած երեխան գտնվեց: Ձայնավոր հնչյունով վերջացող բայահիմքերի դեպքում կրավորական սեռը կազմվում է -n- կան – nil (-nil, -nul, -nül) վերջածանցների միջոցով: Օրինակ՝ demek/ասել – denmek, denilmek/ասվել, okumak /կարդալ – okunmak/կարդացվել, yemek/ուտել – yenilmek/ուտվել: Olay herkesten gizlendi./ Դեպ-

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 58:

քը բոլորից թաքցվեց: Bahçeler sulandi. /Պարտեզները ջրվեցին: – L բաղաձայնով և ձայնավորով ավարտվող հիմքերից կազմվող կրավորական և անդրադարձ բայերը ձևով համընկնում են: Դրանք տարբերելու համար պետք է նայել նախադասության իմաստին: Որտեղ այս խառնաշփոթությունը կարող է աճել, կրավորականը տարբերակվում է կրկնակի կրավորական ածանցով söyle-n-il-mek/ասվել, մինչդեռ անդրադարձ նշանակությունը պարզ կերպով արտահայտվում է **kendi kendim** անդրադարձ դերանվան միջոցով[7]: Օրինակ՝ Kiz yikandi./Աղջիկը լվացվեց (անդրադարձ բայ): Araba yikandi. /Մեքենան լվացվեց (կրավորական բայ): Քանի որ կրավորական սեռը կազմվում է անցողական բայերից, ապա անանցողական բայերը պատճառական ածանցների օգնությամբ նախ վերածվում են անցողականի (- d (-t) կամ- dir), և ապա նրանց ավելանում է կրավորական սեռի ածանցը: Օրինակ՝ uyanmak/արթնանալ – uyandirmak/արթնացնել, uyandirilmak/արթնացվել, kurumak/չորանալ, kurutmak/չորացնել, kurutulmak /չորացվել: Թուրքերենի հասկանալ, անել բառերը չունեն կրավորական սեռ, և դրանց կրավորական սեռը կազմվում է ոչ թե ներգործական սեռի հիմքից, այլ հարկադրական սեռից՝ **anla-t-il-mak**/հասկացվել: Իսկ eylemek (անել) բայը կրավորականի ժամանակ փոխարինվում է edilmek կամ olunmak բայերով: Անցողական բայերի մի սահմանափակ խումբ թույլ է տալիս զուգահեռ ձևերի կազմավորում՝ -il և -i ածանցներով görülmek **և** görünmek/տեսնվել, giyilmek **և** giyinmek /հագցվել, tutulmak **և** tutunmak/բռնվել, tanilmak **և** taninmak/լինել հայտնի, ճանաչված[8]: Կրավորական սեռը կազմվում է ավելի հաճախ այն բայերից, որոնք ցույց են տալիս շարժում, ընթացք, դրություն կամ վիճակ տարածության մեջ: Անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը ծառայում է անդեմ դարձվածքների արտահայտման համար: Այս բայերը խոնարհում չունեն, արտահայտում են միայն երրորդ դեմքի եզակի թիվ[9]: Թարգմանվում են անդեմ նախադասությամբ: Bu saatte gelinir mi?./Մի՞թե կարելի է գալ այս ժամին: Kalkilacak!/ Վեր կենալ: Պետք է վեր կենալ:

Ինչպես բնորոշում է թուրքագետ-լեզվաբան Ա. Կոնոնովը, անանցողական բայերից ձևավորված կրավորական սեռը օգտագործվում է անորոշանձնական նախադասության ստորոգյալն արտահայտելու համար: Ըստ նրա՝

---

[7] **Lewis G.** Teach yourself Turkish, London, 1955, s. 93.

[8] **Иванов С.** Курс турецкой грамматики, часть 2, Грамматические категории глагола, Л., 1977, с.14.

[9] **Koç N.** Yeni dilbilgisi, İstanbul, 1996, s. 333-334.

կրավորական սեռի իրենց իմաստով բաժանվում են երեք խմբի. *անձնական-կրավորական* նշանակության բայեր, *անդրադարձ-կրավորական* նշանակության բայեր, *անորոշ-անձնական* նշանակության բայեր[10]:

1.Անձնական-կրավորական նշանակության բայերը կազմվում են անցողական բայերից և արտահայտում գործողություն, որի դեպքում. ա) գործողության իրական օբյեկտը (դրված ուղղական հոլովով), առանց քերականական լրացման (իրական սուբյեկտի), հանդես է գալիս ենթակայի դերում: Օրինակ՝ Öğle yemeği yendi. / Կեսօրվա ճաշը կերված է: Paltosu çalindi. /Նրա վերարկուն գողացվեց: Tabak kirildi. /Ափսեն ջարդված է (ափսեն ջարդվեց): Վերոհիշյալ օրինակները ցույց են տալիս, որ կրավորական սեռի բայի երրորդ դեմքի եզակի թիվն օգտագործվում է որպես անորոշ-անձնական նախադասության ստորոգյալ: Երրորդ օրինակում կրավորական սեռը բային հաղորդում է անդրադարձ կրավորական նշանակություն: -il ածանցով առանձին բայեր (կախված բայահիմքի նշանակությունից և այլ սեռեր կազմելու հնարավորությունից) ունեն միայն պասիվ-կրավորական նշանակություն՝ **vurmak-vurulmak** / խփել-խփվել , **vuruşmak** /կռվել: **Yemek pişiti** – Ճաշը եփվեց: Yemek pişirdi/ Նա եփեց ճաշը: Yemek pişirildi /Ճաշը եփվեց նրա կողմից: **Օրինակ՝** Yemek pişti./ Ճաշը եփվեց: Yemek pişirdi. /Նա ճաշը եփեց: Yemek pişirildi./Ճաշը եփվեց (ինչ-որ մեկի կողմից):

Եթե նախադասության մեջ գործողության իրական օբյեկտը բացակայում է, սուբյեկտի ցուցիչը (դիմային ածանցը) տրամաբանորեն հանդես է գալիս այդ գործողության օբյեկտի դերում, իսկ ռեալ իրականացնողը ընկալվում է որպես անորոշ-անձնական[11]: Օրինակ՝ Hastaneye gönderiliyorum./Ինձ ուղարկում են հիվանդանոց (Ես ուղարկվում եմ հիվանդանոց): Գործողության ռեալ օբյեկտը (ուղղական հոլովով) հանդես է գալիս ենթակայի դերում, իսկ գործողության ռեալ իրականացնողը՝ (ca – ce, ça – ça) ածանցով կամ (tarafindan) հետդիրով՝ որպես լրացում: Այս դեպքերում գործողության իրական կատարողը կարող է լինել դեմքի կամ դեմքերի հավաքածու (հաստատության, պետական կամ հասարակական ինստիտուտի անվանումը և այլն): Այսպիսով, տրամաբանական սուբյեկտը կարող է լինել – ca, -ce ածանցով գոյական կամ անձնական դերանուն: Օրինակ՝ Hükümetçe yeni bir vergi kanunu kabul edilmiştir. /Կառավարության կողմից հարկերի մասին մի նոր օրենք ընդունվեց:

---

[10] **Кононов А.** Грамматика современного турецкого литературного языка, М. - Л., 1956, с. 198.

[11] **Кононов А.** նույն տեղում, էջ 199:

Bu kitap sizce okunmuşt ur. / Այս գիրքը կարդացվել է ձեր կողմից: Ինչպես վերը նշել ենք, տրամաբանական սուբյեկտը կարող է հաղորդվել ուղղական հոլովով դրված գոյական անվամբ taraf բառի հետ միասին (երրորդ դեմքի եզակի թվի պատկանելության վերջածանցով և բացառական հոլովի վերջածանցով): **Polis tarafından aranıyorum.**/Ես փնտրվում եմ ոստիկանության կողմից: Ağaç Ilyas tarafindan kesilmiştir./Ծառը կտրվել է Իլյասի կողմից: Bu kitap Süleyman tarafindan getirilmiştir./ Այս գիրքը բերվել է Սուլեյմանի կողմից: Տրամաբանական սուբյեկտն արտահայտվում է նաև ստացական դերանուններով և *taraf* բառով՝ համապատասխան պատկանելության վերջածանցներով: *Taraf* բառը, անկախ անհրաժեշտ իմաստից, ընդունվում է ցանկացած դեմքի պատկանող մասնիկ: Օրինակ՝ Mektup (benim) tarafimdan yazildi. /Նամակը գրվեց իմ կողմից: Mustafa (senin) tarafindan çağrilmiştir. /Մուստաֆան կանչվել է քո կողմից: Teklif (bizim) tarafimizdan yapilmiştir. / Առաջարկությունն արվել է մեր կողմից: Առաջին դեմքի եզակի ու հոգնակի թվերի և երկրորդ դեմքի հոգնակի թվի դերանունը կարող է բաց թողնվել: Օրինակ՝ Mektup tarafimdan yazilmiştir./Նամակը գրվել է իմ կողմից: Taşlar tarafinizdan toplanilmiştir./ Քարերը հավաքվել են ձեր կողմից: Այն բառը, որը ցույց է տալիս գործողության միջոց կրավորական սեռի բայի դեպքում, ձևավորվում է ile//- la, -le հետդիրով: Օրինակ՝ Palto firça ile (firçayla) temizlendi./ Վերարկուն խոզանակով մաքրվեց: Mektup kirmizi kalemle yazilmiş./ Նամակը գրվել է կարմիր գրիչով:

2.Անդրադարձ-կրավորական նշանակության բայերն արտահայտում են կրավորական և ընդհանուր-անդրադարձ նշանակություն: Օրինակ՝ bozmak/փչացնել – bozulmak/փչանալ, փչացած լինել, bozunmak բայ չկա, atmak/նետել- atilmak/նետվել, atinmak բայ չկա: Saatim bozulmuş./Ժամացույցս փչացել է: Onlar bahçeye atildilar./ Նրանք նետվեցին պարտեզ: Կրավորական սեռի անդրադարձ-կրավորական նշանակության դեպքում գործողության ռեալ օբյեկտը, եթե այն առկա է, նախադասության մեջ հանդես է գալիս ենթակայի դերում: Օրինակ՝ Kapi açildi./ Դուռը բացվեց («Դուռը բաց էր» նախադասությունն արտահայտվում է անվանական ստորոգյալով «Kapi açik idi»):

3. *Անորոշ-անձնական* նշանակության բայերն արտահայտում են գործողություն, որի իրական կատարողը ընկալվում է որպես անորոշ-անձնական: Օրինակ՝ Kapi araliksiz çaliniyor. /Դուռն անընդհատ ծեծում են: Bana resmen sualler soruldu./ Ինձ պաշտոնապես հարցաքննեցին: Արդեն նշել ենք, որ անորոշ-անձնական նշանակությամբ հաճախ օգտագործվում են շարժում ցույց տվող բայերը: Օրինակ՝ Affedersiniz, şu mahalleye nereden gidilir?/Կներեքմ այդ

թաղամաս ինչպե՞ս գնալ: Անցողական բայերի անորոշ-անձնական նշանակության սովորաբար բարդացվում է գործողության կատարման օբյեկտիվ հնարավորության կամ անհավանականության նրբերանգներով: Կոնտեքստից (խոսքաշարից) կախված՝ կրավորական սեռը բային կարող է տալ անդրադարձ-անդեմ նշանակություն: Օրինակ՝ Yine sola sapildilar./Նորից թեքվեցին ձախ: Ստորոգյալի՝ ուղիղ խնդրի հետ ունեցած կապը, անցողականությունը և անանցողականությունը կրավորականության մի վիճակ են, որ որոշում են ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը: Չնայած այն բանին, որ երկուսն էլ տարբեր կատեգորիաներ են ձևավորում, պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ դրանք այդ գաղափարներով սերտաճած են: Քանի որ անանցողականությունից անցողականության անցումը բայի սեռի ածանցների միջոցով է իրականացվում: Սակայն կրավորականության ածանցը անանցողականության ածանց չէ: Եթե այդպես լիներ, պետք է, որ այն չկցվեր անանցողական բայերին: Սակայն այդ ածանցը հնարավոր է կցել անցողական և անանցողական բոլոր բայերին: Մեր կարծիքով, կրավորական բայը պարտադիր չէ, որ անանցողական լինի: Այլ կերպ ասած, կրավորականության ածանցն անցողականությունը վերացնող բնույթ չունի: Այդ պատճառով անցողական բայերը կարող են գործածվել տարբեր ձևերով: Կրավորական բայի անցողական կառուցվածքի դեպքում պարտադիր է, որ նրա շուրջ գտնվի անվերջածանց հայցական հոլովով անվան նշանակությամբ մի միավոր: Անցողական կրավորական սեռի բայի խոնարհման ժամանակ (վերցվեցի, ուղարկվեցինք, խփվեցինք և այլն) տեղ գտած դիմային վերջածանցը հղում է կատարում ոչ թե գործողությունը կատարողին (ենթակային), այլ գործողությունից ազդված անվերջածանց հայցական հոլովով դրված այն միավորին (ուղիղ խնդրին): Եթե բայի սեռը որոշում է ենթակայի և ստորոգյալի միջև առկա կապը, ապա կրավորականությունն էլ ենթակայի և ստորոգյալի միջև իրականացվող կապի տեսակի արտացոլումն է նախադասության մեջ: Օ. Դեմիջանին նշում է հետևյալը. «Իր ենթակայից ազդվող ստորոգյալը կրավորական է համարվում»[12]: Այնինչ Մ. Էրգինի բնորոշմամբ. «Կրավորական բայերը այն բայերն են, որոնք գործող անձ չեն պահանջում, խոնարհման ժամանակ գործող անձ չունեն, և հայտնի չէ, թե գործողությունն ում կողմից է կատարվում»[13]:

Այսպիսով, ժամանակակից թուրքերենում կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական բայերից համապատասխան ածանցների ավելաց-

[12] **Demircan O.**, Türk Dilinde çati, İstanbul, Papatya Yayincilik, Ankara, 2003, s. 13.
[13] **Ergin M.** Türk dili bilgisi, Sofya, 1967, s. 204.

մամբ: Դրանք դրվում են անմիջապես բայարմատից հետո: Եթե ներգործական սեռի բայերով կազմված նախադասության մեջ իրականության տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս ենթակայի քերականական հասկացությամբ՝ դրվելով ուղղական հոլովով, իսկ տրամաբանական օբյեկտը, որը ենթարկվում է ենթակայի գործողության ներգործությանը, հանդես է գալիս ուղիղ խնդրի քերականական հասկացությամբ և դրվում է հայցական հոլովով, ապա կրավորական սեռի բայերի դեպքում նախադասության տրամաբանական սուբյեկտն արտահայտվում է անուղղակի խնդրով, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կատեգորիայով, այսինքն՝ ներգործական և երկու կրավորական սեռի կատեգորիաները սուբյեկտի և օբյեկտի տրամաբանական տեսակետի մոտավորապես նույն հարաբերությունն են արտահայտում լեզվաբանական տարբեր ձևերով: Եթե ներգործական կառուցվածքի միջոցով արտահայտվում է ակտիվ գործողություն՝ Rektör öğrencisini ödüllendirdi./Ռեկտորը պարգևատրեց ուսանողին , ապա կրավորական կառուցվածքի միջոցով՝ պասիվ գործողություն Öğrenci rektörünü ödüllendirdi./Ուսանողը պարգևատրվեց ռեկտորի կողմից :

ԱՄՓՈՓՈՒՄ

Թուրքերենի կրավորական սեռի բայերն իրենց գործառույթով հակադրվում են ներգործական և չեզոք սեռի բայերին, դրանք կազմվում են ներգործական բայահիմքերին համապատասխան ածանցների կցմամբ, թուրքերենի ներգործական և կրավորական սեռի կատեգորիաները հայերենի նման հնարավորություն են ընձեռում սուբյեկտի և օբյեկտի տրամաբանական տեսակետից գրեթե նույն հարաբերությունն արտահայտելու լեզվական տարբեր ձևերով՝ նախադասության ակտիվ ներգործական և պասիվ կառուցվածքի միջոցով: Նախադասության մեջ տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս անուղղակի խնդրի, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կատեգորիաներով:

Բանալի բառեր **–** բայերի սեռ, բայի կատեգորիա, քերականական սուբյեկտ և օբյեկտ, կրավորական, ակտիվ և չեզոք բայ:

СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПАССИВНОГО ЗАЛОГА В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ

ШУШАН ЗАКАРЯН

Глаголы пассивного залога в турецком языке функционально противопоставляются глаголам активного и нейтрального залогов. Они составляются посредством присоединения к корню глагола соответствующего аффикса. Категории активного и пассивного залогов в турецком, как и в армянском, позволяют выражать с точки зрения логики примерно те же взаимоотношения между субъектом и объектом различными способами, а именно – путем составления активной или пассивной конструкции предложения. Логический субъект выступает в предложении в категории косвенного дополнения, а логический объект – в грамматической категории подлежащего.

Ключевые слова – залог глаголов, категория залога, грамматический субъект и объект, пассивный, активный и нейтральный залог.

SEMANTIC-FUNCTIONAL FEATURES OF THE PASSIVE VOICE IN THE MODERN TURKISH LANGUAGE

SHUSHAN ZAQARYAN

In modern Turkish, the verbs in the passive voice, which are formed by means of adding corresponding affixes to the root of the verbs in the active, functionally contrast with the verbs in the active and neutral voices. The categories of the active and the passive voices in the Turkish language, just like in the Armenian language, give possibilities to express almost identical relationships between the subject and the object of a sentence through different linguistic means, i.e. active or passive sentence structures. In a sentence, the logical subject (entities) as a grammatical category is expressed as an indirect object, while the logical object (observer or thing) as a subject.

Key words – verb voice, voice category, grammatical subject and object, passive, active and neutral voices.